Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԳՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Գեղարքունիքի մարզ–ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.-31.03.2024թթ. |
| Ներկայացման օր | 04.04.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.04.10
15:11:35 AMT

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 50 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 1 դեպքի վարում (կենսապայմանների բարելավման նպատակով նյութական աջակցության տրամադրման կազմակերպում), 20 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված և ակտիվացնող խաղերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ երգ-երաժշտության, գեղարվեստական գրականություն և ասմունք, տեղեկատվական, ձեռագործություն և ջուլհագործություն, որոնց մասնակցել է 38 շահառու:
  Կազմակերպվել է թվով 9 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 25 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
  - ✓ Սուրբ Հարության տոն,
  - ✓ ՀՀ բանակի կազմավորման օր,
  - ✓ Բարեկենդան,
  - ✓ Տեառնընդառաջ,
  - ✓ Հովհաննես Թումանյանի ծննդյան եվ գիրք նվիրելու օր,
  - ✓ Հայրենիքի պաշտպանի օր,
  - ✓ Շահառուի տարեդարձի նշում,
  - ✓ Կանանց միջազգային օր,
  - ✓ Ծաղկազարդ:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 7 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 10)՝ ուղղված մանր մոտորիկայի զարգացմանը, խմբային ինտեգրմանը, խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարմանը:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 1 շահառու օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Տեառնընդառաջին նվիրված միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/rukec, http://surl.li/rxisi և http://surl.li/rzzju),
- Հիշողության խաղ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukga),
- Հատված թումանյանական օրերից (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukgw),
- Հատված երաժշտական խմբակից (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukhk),
- Կենտրոնի առօրյան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukhy),
- Ձեռագործության խմբակի աշխատանքները (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/saesc),
- Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/rukio, http://surl.li/rzzhe, http://surl.li/rukka, http://surl.li/rukjf),
- Շահառուի ծննդյան օրվան նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/ryktp, http://surl.li/rykvr),
- Գրական խմբակը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rykwo),
- Սուրբ Զատկի տոնի նախապատրաստական աշխատանքները (տե՛ս հետևյալ հղումներով՝http://surl.li/rykym, http://surl.li/rylab):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 45/50 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 40 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 6 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 39 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 50 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 31 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 10 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 38 |
| 5.1 | Նշել խմբակի անվանումը ՝ձեռագործության | 19 |
| 5.2 | Նշել խմբակի անվանումը՝ գեղ.գրականության | 20 |
| 5.3 | Նշել խմբակի անվանումը ՝տեղեկատվական | 11 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 25 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | - |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «04» 04.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)